ԹԵՄԱ 2 ԱՍԻԱ

ԴԱՍ 2.5. Վրաստան: Բնակչությունը և տնտեսությունը

• • •

Թբիլիսին Քարթլի պետության մայրաքաղաք դարձավ 6-րդ դարում:

Ռուսաստանի կազմի մեջ եղած տարիներին Կովկասյան փոխարքայության Թիֆլիսի նահանգի վարչական կենտրոնն էր:

Դարեր շարունակ Թբիլիսին տնտեսական,վարչական և մշակութային խոշոր կենտրոն էր Անդրկովկասի, որի կայացման մեջ անուրանալի ներդրումն է ունեցել հայ ժողովուրդը:

Դեռևս ուշ միջնադարում Թիֆլիսում եղել է 24 հայկական եկեղեցի ու վանք: 18-րդ դարի սկզբին այստեղ այցելած ֆրանսիացի ականավոր բուսաբան Ժ. Տուրնեֆորը նշել է,որ քաղաքի շուրջ 20 հազար բնակիչներից ավելի քան 14 հազարը եղել են հայեր: Այդ փաստը հաստատել է անգամ վրաց հայտնի պատմաբան և աշխարհագետ՝Վախուշտին...

Այստեղ են ստեղծագործել Նաղաշ Հովնաթանը, Սայաթ Նովան, հայ դասականներ Գ. Սունդուկյանը,Նար Դոսը, Ռաֆֆին, Հովհ. Թումանյանը և ուրիշներ: Այստեղ է գործել նշանավոր «Վերնատունը»:

Թբիլիսիում իր մանկավարժական գործունեությունն է ծավալել, անգամ աշխարհագրություն է դասավանդել Խաչատուր Աբովյանը...